ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Նկարում ո՞ր տառով է պատկերված հյուսիսային բևեռային շրջագիծը.**

1) Է
2) Ա
3) Բ
4) Գ



2 **Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 250 000 000 է, ապա դրա անվանական մասշտաբը կլինի.**

1) 1 սմ–ում՝ 2,5 կմ
2) 1 սմ–ում՝ 250 կմ
3) 1 սմ–ում՝ 2500 կմ
4) 1 սմ–ում՝ 25 կմ

3 **Երկու կետերի հեռավորությունը 1 : 3 000 000 մասշտաբի քարտեզում 12 սմ է: Կետերի միջև իրական հեռավորությունը կլինի.**

1) 460 կմ
2) 300 կմ
3) 360 կմ
4) 400 կմ

4 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հավասարանկյուն պրոյեկցիայում աղավաղվում են միայն անկյունները, իսկ օբյեկտների մակերեսները և գծերի երկարությունները չեն աղավաղվում:
2) Երկրի գնդաձևության շնորհիվ նույն պահին նրա մակերևույթի տարբեր աշխարհագրական լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:
3) Երկրագունդը էլիպսաձև է և հասարակածից ավելի շատ է սեղմված, քան բևեռներից:
4) Ամենաերկար միջօրեականը գլխավոր կամ զրոյական միջօրեականն է:

5 **Մեկ խորանարդ մետր օդում պարունակվող ջրային գոլորշիների քանակը՝ արտահայտված գրամներով, կոչվում է.**

1) չհագեցած օդ
2) հագեցած օդ
3) հարաբերական խոնավություն
4) բացարձակ խոնավություն

6 **Բնութագրումով որոշել օդային զանգվածի տիպը.**

Այդ օդային զանգվածները ձևավորվում են մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում՝ ձյան և սառույցների վրա: Այդ պատճառով դրանք մշտապես սառն են, չոր ու թափանցիկ: Ո՞ր օդային զանգվածներն են.

1) հասարակածային
2) արկտիկական (անտարկտիկական)
3) բարեխառն
4) արևադարձային

7 **Արեգակից ստացվող ջերմության քանակը կախված է.**

1) տվյալ վայրի բուսապատվածության աստիճանից
2) գերիշխող քամիներից
3) լեռնալանջերի դիրքադրությունից
4) օվկիանոսներից և ծովերից տվյալ վայրի ունեցած հեռավորությունից

8 **Օդի բացարձակ խոնավությունը 12 գ/մ³ է: Տվյալ ջերմաստիճանում օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 40 գ/մ³ ջրային գոլորշի: Հարաբերական խոնավությունը կլինի.**

1) 70 %
2) 20 %
3) 30 %
4) 50 %

9 **Ո՞ր մայրցամաքի ռելիեֆի կտրվածքն է պատկերված արևմուտքից արևելք ուղղությամբ.**



1) Հարավային Ամերիկա
2) Աֆրիկա
3) Ավստրալիա
4) Անտարկտիդա

10 **Կլիմագրամի միջոցով որոշել, թե որ սեզոնին են թափվում ամենաշատ տեղումները հարավային կիսագնդի Բ բնակավայրում.**

1) ձմռանը
2) գարնանը
3) ամռանը
4) աշնանը



11 **«Գետ — ծոց» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Կուպերս կրիկ — Մեծ Ավստրալական
2) Կոլորադո — Մեքսիկական
3) Լուար — Բիսկայան
4) Ինդոս — Օմանի

12 **Ո՞ր բնական զոնային բնորոշ բուսատեսակներ են կաղնին, հաճարենին, հացենին, թխկին.**

1) բարեխառն գոտու լայնատերև անտառների
2) մերձարևադարձային մշտադալար անտառների և թփուտների
3) սավաննաների և նոսր անտառների
4) հասարակածային խոնավ մշտադալար անտառների

13 **Բնութագրումով որոշել գետը.**

Գետը Եվրասիայի արևելյան մասում է և թափվում է Դեղին ծով: Հորդանում է ամռանը՝ կապված մուսսոնային անձրևների հետ: Ո՞ր գետն է.

1) Ամուր
2) Հուանհե
3) Յանցզի
4) Մեկոնգ

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Արեգակից ստացվող ջերմությունը Երկրի վրա բաշխված է հավասարաչափ:
2) Արևադարձային լայնություններում հաստատվում է ցածր ճնշում:
3) Որքան փոքր է Արեգակի ճառագայթների անկման անկյունը, այնքան Երկրի մակերևույթը քիչ ջերմություն է ստանում:
4) Մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում առատ տեղումներ են թափվում:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Յուրաքանչյուր ժամային գոտուց արևելք ընկած գոտու ժամանակը 1 ժամով առաջ է նախորդից:
2) Արեգակի ճառագայթները նույն լայնության վրա տարվա ընթացքում միշտ նույն անկյան տակ են ընկնում:
3) Երկիրն Արեգակի շուրջը պտտվում է շրջանաձև ուղեծրով:
4) Մարտի 21–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հարավային արևադարձի վրա:

16 **«Գետ — աշխարհամաս» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Անգարա — Ասիա
2) Թեմզա — Ավստրալիա և Օվկիանիա
3) Արաքս — Եվրոպա
4) Ամուր — Ամերիկա

17 **Ո՞ր ծովերի մակերևութային ջրերն են սառը.**

1) Կարիբյան և Սարգասյան
2) Արևելաչինական և Արաբական
3) Բաֆինի և Ռոսսի
4) Կորալյան և Կարմիր

18 **«Հարթավայր — դրա տարածքով հոսող գետ» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Կենտրոնական հարթավայրեր — Մակենզի
2) Մեծ ավազան սարահարթ — Յուկոն
3) Մեծ Հարթավայրեր — Միսսուրի
4) Լավրենտյան սարահարթ — Կոլորադո

19 **Ո՞ր լեռներն են քարտեզում նշված Դ տառով.**

1) Զագրոսի
2) Էլբուրսի
3) Հինդուկուշի
4) Տյան Շանի



20 **Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզում նշված Ը տառով.**

1) Բաղդադ
2) Իսլամաբադ
3) Քաբուլ
4) Թեհրան

21 **Ուրբանիզացման մակարդակը որոշող ցուցանիշ է.**

1) Ամբողջ քաղաքային բնակչության թվի հարաբերակցությունը խոշոր քաղաքների բնակչության թվին
2) քաղաքային բնակչության բաժինը երկրի ընդհանուր բնակչության մեջ (%)
3) քաղաքային բնակչության թվի հարաբերակցությունը տարածքի մակերեսին (բն./կմ^2)
4) քաղաքային բնակչության ծնվածների և մահացածների թվի տարբերությունը (մարդ)

22 **Քաղաքային և գյուղական բնակավայրերի խոշոր կուտակումը մեծ քաղաքի կամ քաղաքների շուրջը, որոնք միմյանց հետ կապված են աշխատանքային, մշակութային, կենցաղային, արտադրական և այլ կապերով, կոչվում է.**

1) ասիմիլյացիա
2) միգրացիա
3) ագլոմերացիա
4) ուրբանիզացիա

23 **Բնութագրումով որոշել երկիրը.**

Այս երկիրը նախագահական հանրապետություն է: Այն ցամաքային կապող օղակ է Պիրենեյան թերակղզու և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների միջև: Հարուստ է ուրանի պաշարներով, որի շնորհիվ էլեկտրա–էներգիայի զգալի մասը արտադրվում է ատոմներում: Ո՞րն է այդ երկիրը.

1) Իսպանիան
2) ՌԴ–ն
3) Ֆրանսիան
4) Գերմանիան

24 **Երկրի բնակչության թիվը 4 մլն է, բնական աճի գործակիցը՝ 20 ‰: Բնակչության բացարձակ բնական աճը կկազմի.**

1) 100 000 մարդ
2) 20 000 մարդ
3) 40 000 մարդ
4) 80 000 մարդ

25 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Եվրոպական երկրներում ձևավորվել է բնակչության վերարտադրության առաջին տիպը:
2) Երբ ծնելիությունը հավասար է մահացությանը, վերարտադրությունը կոչվում է պարզ:
3) Զարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգ:
4) Զարգացած երկրներում՝ բնակչության սեռային կազմում, կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին:

26 **Ընտրել «պետություն — մայրաքաղաք» համապատասխանության ճիշտ շարքը.**

1) Աֆղանստան
2) Թուրքիա
3) Եմեն
4) Վրաստան

ա. Անկարա
բ. Սանա
գ. Թբիլիսի
դ. Քաբուլ

1) 1–դ, 2–ա, 3–բ, 4–գ
2) 1–դ, 2–բ, 3–գ, 4–ա
3) 1–գ, 2–դ, 3–ա, 4–բ
4) 1–ա, 2–բ, 3–դ, 4–գ

27 **«Արտադրություն — արդյունաբերության ճյուղ» զույգերից ո՞րն է ճիշտ.**

1) սարքաշինություն — մեքենաշինություն
2) պլաստմասսայի արտադրություն — մետաղաձուլություն
3) կաուչուկի արտադրություն — էներգետիկա
4) պղնձի արտադրություն — քիմիական արդյունաբերություն

28 **Հարավարևելյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ֆիլիպիններում բնակչության գերակշիռ մասը դավանում է մահմեդականություն:
2) Սինգապուրը տարածաշրջանում ուրբանիզացման ամենաբարձր մակարդակ ունեցող երկիրն է:
3) Ճավան տարածաշրջանի ամենանոսր բնակեցված կղզին է:
4) Տարածաշրջանում բնակչության թվով ամենախոշոր երկիրը Բրունեյն է:

29 **Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներ են.**

1) Իտալիան և Ճապոնիան
2) Բանգլադեշը և Հնդկաստանը
3) Կամերունը և Պակիստանը
4) Նիգերիան և Կոնգոն

30 **Սեռատարիքային բուրգը բնորոշ է.**

1) Ալժիրին
2) Գերմանիային
3) Պակիստանին
4) Իրանին



31 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ջրաէլեկտրակայանները հիմնականում կառուցվում են հարթավայրային գետերի վրա
2) Աէկներն ապահովում են աշխարհում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին:
3) Ծանր գունավոր մետաղների ձուլումը կողմնորոշվում է դեպի հումքի բազաները:
4) Պողպատի ձուլման ձեռնարկությունները կառուցվում են գիտական կենտրոնների մոտ:

32 **Ընտրել «առաջատար երկիր — մշակաբույս» համապատասխանության ճիշտ շարքը.**

1) Ռուսաստան	ա. եգիպտացորեն
2) Բրազիլիա	բ. արևածաղիկ
3) ԱՄՆ	գ. թեյ
4) Հնդկաստան	դ. սուրճ

1) 1–բ, 2–ա, 3–դ, 4–գ
2) 1–բ, 2–դ, 3–ա, 4–գ
3) 1–ա, 2–գ, 3–դ, 4–բ
4) 1–դ, 2–գ, 3–բ, 4–ա

33 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Արաքս գետի հովտում հայտնի են Կարնո և Երզնկայի դաշտերը:
2) Հայկական հրաբխային բարձրավանդակի հարավային մասի արևմուտքում է Բյուրակն լեռնազանգվածը:
3) Արդահանի և Ախալքալաքի սարավանդները Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում են:
4) Արևմտյան Եփրատի միջլեռնային գոգավորություններից նշանավոր են Ալաշկերտի, Մշո, Խարբերդի դաշտերը:

34 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ալյումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
2) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
3) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:
4) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:

35 **Կոտայքի մարզը ո՞ր մարզին սահմանակից չէ.**

1) Արագածոտնի
2) Լոռու
3) Արմավիրի
4) Տավուշի

36 **Ո՞ր ջրանցքն է քարտեզում նշված Դ տառով.**

1) Կոտայքի
2) Լոռու
3) Շիրակի
4) Նալբանդի

37 **Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Ը տառով.**

1) Ապարան
2) Թալին
3) Աշտարակ
4) Հրազդան



38 **Ո՞ր շարքի բոլոր երկրներն են հարուստ ջրաէներգետիկ ռեսուրսներով.**

1) Ճապոնիա, Ալժիր, Ավստրալիա
2) Բրազիլիա, Ռուսաստան, Կանադա
3) Ռուսաստան, Չինաստան, Մոնղոլիա
4) ԱՄՆ, Ղազախստան, Եգիպտոս

39 **Տրվածներից ո՞րը մթնոլորտի մարդածին աղտոտման աղբյուր չէ.**

1) անտառային հրդեհները
2) ջերմաէլեկտրակայանները
3) ջերմաէլեկտրակենտրոնները
4) կաթսայատները

40 **Պետական օրենքով կամ ազգային ավանդությամբ պահպանվող տարածքը, որտեղ ամբողջապես բացառված է մարդու տնտեսական գործունեությունը, կոչվում է.**

1) բնության հուշարձան
2) արգելավայր
3) ազգային պարկ
4) արգելոց

41 **Գրել այն լեռնային համակարգերի համարները, որոնք Եվրոպայում են.**

1) Կարակորում
2) Ալթայի լեռներ
3) Փոքր Կովկաս
4) Ալպեր
5) Սկանդինավյան լեռներ
6) Կարպատներ
7) Չերսկու լեռներ
8) Էլբուրսի լեռներ

42 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են պողպատի արտադրությամբ.**

1) Կանադա
2) Մեքսիկա
3) Եգիպտոս
4) Արգենտինա
5) Ղազախստան
6) Չինաստան
7) Ճապոնիա
8) Ավստրալիա

43 **Գրել Հայկական հրաբխային բարձրավանդակի հյուսիսային մասի լեռնագրական միավորների համարները.**

1) Մեծ Մասիս լեռ
2) Սիփան լեռ
3) Ջավախքի լեռնազանգված
4) Արդահանի սարավանդ
5) Սյունիքի բարձրավանդակ
6) Եղվարդի սարավանդ
7) Կոտայքի սարավանդ
8) Ախալքալաքի սարավանդ

44 **Տրված տրանսպորտի տեսակները դասավորել համաշխարհային ուղևորա-փոխադրումների կառուցվածքում ունեցած կշռի նվազման կարգով.**

1) երկաթուղային
2) ծովային
3) ավիացիոն
4) ավտոմոբիլային

45 **ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Հարևան պետությունների համեմատ բնակչության բարձր խտություն ունեցող երկիր է:
2) Եզդիների մեծ մասը բնակվում են Արագածոտնի և Արմավիրի մարզերի գյուղական բնակավայրերում:
3) Մինչև 1000 մ բարձրությունները ՀՀ ամենանոսրաբնակ տարածքն է:
4) 1988-1990 թթ. ավելի քան 180 հազ. ադրբեջանցիներ Հայաստանից հեռացան, իսկ ազատված բնակավայրերում հաստատվեց Ադրբեջանից արտաքսված հայությունը:
5) ՀՀ բնակչության կեսից ավելին բնակվում է 1500-2500 մ բացարձակ բարձրության գոտում:
6) Բնակչության թվով երրորդ քաղաքը Գյումրին է:

Բ մակարդակ

46 **Երևան (արլ. ե. 44º30′) և Պրահա (արլ. ե. 14º) քաղաքների գոտիական ժամանակների տարբերությունը կլինի.**

1) 4 ժամ
2) 1 ժամ
3) 2 ժամ
4) 3 ժամ

47 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Երկրի առանցքի թեքությունն իր ուղեծրի հարթության նկատմամբ կազմում է 23° 30′ անկյուն:
2) Ամբողջ երկրագնդի, նրա մայրցամաքների կամ երկրների ընդհանրացված պատկերը թղթի վրա կոչվում է հատակագիծ:
3) Երկրի մակերևույթի որևէ կետի բարձրությունը՝ հաշված ծովի մակարդակից, կոչվում է հարաբերական բարձրություն:
4) Մասշտաբը թվային արտահայտություն է, որը ցույց է տալիս, թե հատակագծում կամ քարտեզում պատկերված տարածքը քանի անգամ է փոքրացված իրական չափերից:

48 **Ո՞ր շարքի գետերն են հոսում հարավից հյուսիս ուղղությամբ.**

1) Օբ, Ենիսեյ, Լենա
2) Դնեպր, Վոլգա, Մեկոնգ
3) Ինդոս, Եփրատ, Գանգես
4) Դանուբ, Կուր, Ամուր

49 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում օդը կատարում է վարընթաց շարժում:
2) Հասարակածից բևեռներ շարժվելիս Արեգակից ստացվող ջերմության քանակը նվազում է:
3) Երկրագնդի վրա առանձնացնում են մթնոլորտային ցածր ճնշման չորս և բարձր ճնշման երեք գոտիներ:
4) Մթնոլորտային ցածր ճնշման գոտիներում լինում են առատ տեղումներ:

50 **Ո՞րն է բնության բաղադրիչների ճիշտ զուգորդությունը.**

1) տունդրա — կմախքային հող — հաճարենի, կաղնի
2) տայգա — պոդզոլային հող — եղևնի, սոճի
3) տափաստան — սևահող — օշինդր, ուղտափուշ
4) սավաննա — մոխրագորշ հող — փետրախոտ, սիզախոտ

51 **«Սահմանակից երկրներ — գետեր» զուգորդումներից ընտրել ճիշտը.**

1) ԱՄՆ — Կանադա — Կոլորադո
2) Ռուսաստան — Չինաստան — Ամուր
3) Իրան — Թուրքիա — Եփրատ
4) Ռուսաստան — Ուկրաինա — Դնեպր

52 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հնդկաստանի բնակչության մեծ մասը դավանում է բուդդայականություն:
2) Հինդուականություն և սինտոականությունը ազգային կրոններ են:
3) Իրանի բնակչության մեծ մասը դավանում է իսլամի շիա ուղղությունը:
4) Քրիստոնյաների մեծ մասը կաթոլիկներ են:

53 **«Նավահանգիստ — պետություն» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Մարսել — Կանադա
2) Ռոտերդամ — Նիդերլանդներ
3) Վանկուվեր — Գերմանիա
4) Համբուրգ — Ֆրանսիա

54 **Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Թեթև արդյունաբերության առաջատար ճյուղերից է բամբակյա գործվածքների արտադրությունը:
2) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:
3) Սև մետաղաձուլությունը տեղաբաշխված է երկրի արևմուտքում:
4) Հանքային հումքի բացակայության պատճառով արդյունաբերության կառուցվածքում բացակայում է քիմիական արդյունաբերությունը:

55 **Բնութագրումով որոշել պետությունը.**

Եվրոպական այս երկիրը սահմանադրական միապետություն է: Մայրաքաղաքը խոշոր ծովային նավահանգիստ է և համաշխարհային նշանակության ֆինանսական կենտրոն: Արդյունաբերության ավանդական ճյուղերից են ածխարդյունաբերությունն ու սև մետաղաձուլությունը: Ո՞րն է այդ պետությունը.

1) Շվեդիան
2) Ֆրանսիան
3) Գերմանիան
4) Մեծ Բրիտանիան

56 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հարավային լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզում է Արփայի գոգավորությունը:
2) Սևանա լիճն արևմուտքից եզրավորվում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաներով:
3) Շիրակի լեռնաշղթան ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ Բազումի լեռնաշղթայից մինչև Վիրահայոց լեռնաշղթա:
4) Սյունիքի բարձրավանդակի ամենաբարձր լեռնագագաթը Մեծ Իշխանասարն է:

57 **Ո՞ր կլիմայատիպն է բացակայում Սյունիքի մարզում.**

1) ցուրտ լեռնային
2) չոր մերձարևադարձային
3) բարեխառն լեռնային
4) չոր, խիստ ցամաքային

58 **Լոռու մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.**

1) պանրի արտադրությունը
2) գինու–կոնյակի արտադրությունը
3) պղնձաձուլությունը
4) քիմիական արդյունաբերությունը

59 **Ի՞նչն է ընդհանուր Սյունիքի և Վայոց ձորի մարզերի համար.**

1) Աչքի են ընկնում ուրբանիզացման բարձր մակարդակով:
2) Մարզերում գերակշռում են մակերևույթի հարթ ձևերը:
3) Սահմանակից են Նախիջևանի ԻՀ–ին:
4) Տուֆի, պեռլիտի պաշարներով ամենահարուստ մարզերն են:

60 **Խաղողագործական շրջան է.**

1) Ապարանի սարահարթը
2) Արփայի հովիտը
3) Շիրակի դաշտը
4) Սևանի ավազանը

61 **Տրված պետությունները դասավորել եգիպտացորենի համախառն բերքի աճման կարգով.**

1) Մեքսիկա
2) Չինաստան
3) ԱՄՆ
4) Բրազիլիա

62 **Գրել այն երկրների համարները, որոնք միապետություններ են.**

1) Ֆինլանդիա
2) Իսպանիա
3) Գերմանիա
4) Շվեդիա
5) Վրաստան
6) Քուվեյթ
7) Իրաք
8) Իրան

63 **Գրել նեֆելինային սիենիտի հանքավայրերի համարները.**

1) Աբովյանի (Կապուտան)
2) Փամբակի (Թեժ լեռան)
3) Մեղրու (Շվանիձոր)
4) Ագարակի
5) Սոթքի
6) Հրազդանի
7) Շամլուղի
8) Սվարանցի

64 **Գրել Արևելյան Եփրատի հովտում ընկած դաշտերի համարները.**

1) Բասենի
2) Կարնո
3) Մշո
4) Խարբերդի
5) Երզնկայի
6) Արարատյան
7) Նախիջևանի
8) Շիրակի

65 **Երկրի երկաթուղային տրանսպորտով տարեկան փոխադրվում է 2 մլն տ բեռ, իսկ բեռնաշրջանառությունը կազմում է 420 մլն տ·կմ: Որքա՞ն է բեռների փոխադրման միջին հեռավորությունը:**

(66-67) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ օդի ջերմաստիճանը՝ 22^0 C: Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը + 10^0 C է (հաշվարկը կատարել 6^0 C –ով).

66	Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

67	Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին:

(68-69) Երկրի բնակչության թիվը 2 մլն է, բնական աճի գործակիցը՝ 20 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 12 400 մարդ, արտագաղթը՝ 8 520 մարդ.

68	Որոշել բնակչության մեխանիկական աճը:

69	Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

70 **Հարավային Ամերիկայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Ներքին հոսքի ավազանին է պատկանում տարածքի չնչին (շուրջ 2 %) մասը:
2) Հյուսիսային Ամերիկայից բաժանվում է Սուեզի ջրանցքով:
3) Հարավարևմտյան ափերի մոտով անցնում է Ֆոլկլենդյան սառը հոսանքը:
4) Հարավամերիկյան պլատֆորմի բարձրացած տեղամասերում ձևավորվել են Բրազիլական և Գվիանական սարահարթերը:
5) Անդերի՝ 4000 մ-ից վեր տարածվող բարձրալեռնային մարգագետիններին տեղացիները կոչում են լյանոս:
6) Կլիմայի ձևավորման վրա Խաղաղ օվկիանոսի ազդեցությունը սահմանա–փակում է Անդյան լեռնային համակարգը: